

ՎԻՃԱՊԱՐԱԳԱՆՑ ՊԱՇՏՈՒՄՈՒՆՔԸ

U.₂

ԲԻՒՐԱԿՆԵԱՆ

1. Անհաւատալի համանմանութիւն եւ
կրօնական պաշտամունքի հետքերը պահ-
պանւած են Գետերի (Եսայիլի) երկրի բո-
լոր վտակների ակունքներում։ Նախնական
եօթը առւակներ տարրեր անուններով հո-
սում են ապա միանալով՝ մի կէտի վրայ
կազմում են ջրերի պաշտամունքի կեն-
տրոնական միութեան զվաստոր ուխտա-
տեղին։ Այսպէս է կուր գետի ակունքը կո-
ւայում – Եղի քիլիսէ, Խրամ գետի ակունքը
Գուգաբը Ծաղկոցում¹, – Եղի քիլիսէ.
այդպէս են Արաքսի ակունքը Բիւրակ-
նում, Մորմեծի ակունքը Մեծրանց լեռ-
ների մէջ եւ Վանանդում – Եղի քիլիսէ,
Ճորոխի ակունքները Թորթում, Օլթի եւ
Սպեր, Եփրատի եւ Տիգրիսի ակունքները։
Արաքսն ու Բիւրակը շատ են երգւած
կուպաշտ, ըրիստոնեայ եւ թուրք աղան-
դաւոր աշուղներից եւ բանաստեղծներից,
նրա գերազոյն զօրութիւնը երկինք են
բարձրացրել, Վիշապ-Անահիտին Գետերի
«աշխարհի կեանքն ոչ կնցուցիչն եւ յայ-
տարարել» եւ մարդկութեան Փրկիչը, Ա-
գաթանգեղոսից մինչեւ աշուղ Հազիտին։
Անահիտի պաշտամունքի հետքերը աւելի
ցայտուն կերպով բացատրւած են Արաքսի
եւ որա վտակների շուրջը, որի ակուն-
քում մինչեւ այսօր կանգուն են եւ ու-
սումնաիրողի աչքերն զրաւում Վիշա-
պամօր բազինների եւ կոթողների բե-
կորները, որոնք թէեւ փշրւել ու կործա-
նւել են մեզնից 1600 տարիներ առաջ
քրիստոնէութեան ձեռքով եւ 1200 տա-
րուց ի վեր խամ մոլլանների հրաման-

Ներով, բայց աշխատաւոր ժողովուրդը
հանդերձ իր քրիստոնեայ կամ մահմետա-
կան դաւանութեան՝ անընդհատ հետամտել
է իր բնապաշտ նախապաշտարութեամերին և
պաշտել է վիշտապական Անահիտ դիցու-
հուն մինչեւ այսօր։

2. Տիկին Անահիտին վերագրեւած ա-
ռասպելներն որքան բնական եւ գեղար-
ուեստական են, որ այլեւայլ կրօնի հո-
գեւորականները չեն կարողացել բնակ-
չութեան մորից ու գանկից զուրս վանել
այդ կենսական, զւարթ եւ ըզճալի պատ-
կերները։ Երբ ձորերն ու անտառները դա-
լարում են ծաղկում, երբ բուքն ու բորանը
դադարում են, երբ պայման սաւանին փո-
խարինում են զաշտերի կանաչները, բոյ-
սերի կենսատու բոյրը, հասարակութիւնն
էլ ալ ու կանանչ զուգւած զուրս է գա-
լիս իր ստորերկրեայ այրերից, բարձրա-
նում է վտակների եւ առւակների ակունք-
ները, աւանդական ուխտատեղի — զիարեր
և զոհուշրաբերը, երկրպագելու յարու-
թիւն առած, կենդանացած աշխարհին եւ
նրան փրկողին, զոհեր ու պատարագներ
կատարելու բազինների վրայ, երգելու,
կաքաւելու, պարելու եւ հրճուելու այդ
բարձրունքներում։

Յ. Աւրարտու սարադաշտում կանգնած
են եօթը ահաւոր կատարներ, որոնց լան-
ջերից, ստորոտներից բխած բիւրաւոր
ակերից առաջցել են հազարաւոր լճակ-
ներն, որոնցից արտահանած ջրերից կազ-

1. **Տես կոչնակ - Բոստոնում, թ. 2-4, 1926 թ.**
թ. 2-5, 1926 թ. աշխատութեաներու

մըւած է Արաքսի ակունքը, 10,440 ոտ-
նաչափ բարձրութեան վրայ։ Բինգեօլ-
կալա կատարի լանջերից եւ սրա բագին-
ներից (Կալա) բխում են Արաքսի սկզբ-
րնական ակունքները եւ հոսում են հա-
րաւից հիւսիս։ Կատարներին շինւած բո-
ւոր բագինները Սելջուքները «Կալա» բա-
ռով են թարգմանել, պէտք է ուղղել Բաշ-
զին, քանի որ այդ պատարւած տեղե-
րում չի կարելի տասը զինւոր տեղաւո-
րել, ամենաշատը երեք մարդ կարող են
կանգնել, քուրմը, սպանզը եւ սպասա-
ւորը, որոնց ներկայացւած զո՞ր պատա-
րագում, արիւնը հոսեցնում եւ վերա-
դարձնում էին ուխտաւորներին։ Այսպէս
ումժկ ժողովուրդը աւանդաբար Աչկա-
տարեան (թէիէ գեօզ) բագինները «Քեօր
օղլի Ղալասի» է անւանել եւ օտար այ-
ցելուները ենթագրել են, թէ քեօր-օղլի
ասսինէ (ապստամբ) այս հերոսը, այնինչ
Քեօր-օղլին ապրել է 1608 թ. մաքառել
է Ղոյուջի Մուրադ փաշայի դէմ։ Այն
ինչ այս բագինները շրջապատուած են
որձաքարերով Աչկատար (Cycloپ) շրջա-
նում, նախնական քարային դարում, Շում-
մեր Ակաղների ժամանակներում մեզնից
առ նւազն 7-8 հազար տարի առաջ։

4. Պահլաւ հանքափորերի շրջանում են շինուած թիւրակնեան լեռների բազիններն ու քարայրները, վանքերն ու Գոմերը, որտեղերից պղինձ, կլայեկ, արծաթ ու

Էզէլ բահար եազ այլարփ գեալէնդա ,
Ախար բողբուշանըք սէլի Բին Գեօլըն .
Ղաթար զաթար օլմուշ ակչա մայաւար ,
Հէջ հէսաբա գեալմազ էլի Բին Գեօլըն :
Բու զէմանդա բու երլէարի գէզմէլի ,
Կալէմ ալըբ կաշի , գեօզի եազմալի ,
Թողիփուզի խալխալ , բուրնի խզմալի ,
Խանում , ներդէն աշար եօլի Բին Գեօլըն :
Ղնալամիշ այաղընը , էլընը ,
Քեամար զուշանմըշ ինչէ բելընը ,
Բէն զարիբըմ բիլմամ եայլա եօլընը ,
Ազար , ներդէն աշար եօլը Բին Գեօլըն :
Նէ խոշ օլուր բու տաղլարըն հավասի ,
Շահան զուշար իւթսէք եափար եուշասի ,

Երբ գալիս է զարդնան գւարթ եղանակն,
Հեղեղում են, պղտոր ջրելն ու բիւրակն,
Բորբոքում են սերմ թէ մակարդ բովանդակ,
Անսահման է էլն ու մալը թին-Գեօլիք:
Այդ ժամանակ պէտք է քեզ մօտ այցի գալ,
Գծել զրչով աչքը ու յօնքու, նուրբ նկար,
Սրտնքներից ապարանջանք, Քթիդի գինու,
Տիկին, որդից կ'անցնի բիւրակի ճանապարհն:
Ճինայած է ուռեր, ձեռքեր ու զաստակ,
Կամարած է նազուկ մէջքը եւ բազուկ,
Ես օտար եմ, չխում եայլի խոկ շաւիզն
Ազա, որդից անցնիմ-հասնիմ թին Գեօլիք:
Հաճելի է այս լեռների եղանակ,
Բարձր մն շինած բազէները բռն բնակ,

Դաթար դաթար օլմուշ թիւրման մայասի, գքիւրը եայլայա էլի բինգեօլըն: Բոլաշի չոք, սուի սովուք իչիւմնեղ, Գիւզէլէրի բիրի բիրինդէն սէչիւմիզ, Եարդան այրըլը գեօնլըմ աչմա Խանում նէրդէն աշար եօլի բինգեօլըն:

Մակարդւած է թուրմանների լիք-դաշտան, Եայլա քաշւեց բին գեօլի էլն բնակ... Անթիւ աղբիւր, սառը ջրեր, անհամար Զքնաղները զանազաննեն անհնար, Սիրոց անջատ, վշտամրմոք ու մոլար ի՞նչպէս գտնեմ բինգեօլ ուխտի ճանապարհն:

Քառասուն տարի առաջ «Ալմաստ» վէսպում փոխաղիւր եմ այս տաղը ճետեւեալ կերպով.

«Բիւր գոյն ծաղկով կանանչ գարունդ երբոր գայ, Երբոր բուրեն սրանց անուշ, ախորժ հոտն, Երբ երգեցիկ թաշուններիդ արձագանգ Գեղգեղալով թնգացնում են երկինքն, օդն, Այն ժամանակ պէտք է քեզի այցի գալ Մայր կենսատու աղբիւրների, բիւրական, Տիկին որդից, տէր, ո՞ր աեղից, ասէք գնամ [դէմ առ դէմ, Բիւր լճերից, աղմոտ մարգից անցնիմ անտառ

[դէպ Եղեմ:

Ալծաթապատ լճակներըդ անհամար, Շրջապատուած թաւիչի պէս խոս դալար, Նազկթելով, շորորալսվ հոսելիս, Բարձր զիւրից պէտք է քեզի մոտիկ տալ, Լճակների ովլ թագունի, բիւրական Տիկին որդից, տէր մը ամէն տարի վարդավառին հարիւրաւոր սայլերով ուխտաւորներ են այցելում այդ վայրերը, Անահիտից օգնութիւն եւ շնորհ խնդրելու, այդ վայրը նիբրաւկան է հայի, քրդի, թուրքմանի համար, մեծ Զիարէթ է (Զուհուրաթ - յայտնութեան վայր), ուր ամէն տարի վարդավառին հարիւրաւոր սայլերով ուխտի են գնում եւ վիշապամօր տօնն են կատարում թմբուկներով, ծնծաղներով եւ փողերով: Սրբոհանի լանջին կանգնեցրած է Անահիտի կոթողը, նման Արագածի Ղանգափէր լճակի ափին գտնուած բազալտէ վիշապներին կամ Գանձա լճակի ափին մինչեւ օրս կանգնած կոթողին, եւ Շիրակի Սոգիւղի գեղի վիշապական աւազանների դէմ - գերեզմաննոցում կանգնած վիշապ արձանին, որոնք ամենն էլ բարեխտարար կանգուն են մնացել մինչեւ ի դար: Սրբոհանի լանջի այս կոթողի տակից բիւրում է մի առատաջուր աղբիւր, Գերագոյն Յայտեռիւն համարուած, որը վազում եւ լցում է Ոսկէ լճակը, որը Ոսկիամօր Գիրկն է կոչում բնիկներից: Սարը, կոթողը, աղբերակի աւազանը, ջըրանցը հաւաստիացնում են, որ դրանք բնական ծնունդ չեն, այլ հաստատած են գիտակից մարդերի ջանցերով որոշ մեծամեծ վէպերի նիւթ գարձած Սրաբսի

[Կոպմ, Տիկին, մրգից, տէր, ո՞ր տեղից ասէք գնամ [դէմ առ դէմ, Բիւր լճերից, աղմոտ մարգից հասնիմ անտառ [դէպ Եղեմ:

5. Եղեմական համարւած սարադաշտի հօթը ահաւոր կատարներից բիւրաւոր աշկունքներից բխած ջրերից առաջացել են հազարաւոր լճակներ, որոնց ջրերից կազմում է Սրաբը 10,440 ոտնաչափ բարձրութեան վրայ: Այս սարերի լանջերի վրայ հիմնած բազիններից (կալա) բիւրում են Արաբսի սկզբնական աղբիւրները եւ հոսում են հարաւից հիւսիս: Եթէ քննուի մեծամեծ վէպերի նիւթ գարձած Սրաբսի ծաղկութեան մասին անունը:

ակունքի - Բինգեօլի շրջապատի կատարների բազինների, գոմերի, վանքերի, եայլաների անունները, կը պարզուի, որ դըրանք հիմնուած են Վիշապազանց ըլլում մապինների շրջանում հանցավորների մանամար Զքնաղները թէր օղան են անհանում, որի սարալանցում ունեցած աւերակները հօթանասուն դարերի անցեալ ունին իրենց աշկատարեան անկոփ, ապա Ուրարտական կոփածոյ եւ Պարթեւական սրբատաշ որձաքարէ պատւարներով եւ աւազանով:

Այս վտակը աւելի առաջ գալով հիւսիսից՝ Ալթուն դակից (Ոսկէ սարից), փոքրիկ Ալթուն (Ոսկէ) լճակից իջած, Ալթուն եայլայի եւ Ալթուն գեղերի արատները ցօղած ու ոսոգած Ալրուն առակն է ձախից ընդունում, որը միանաւով Արաբսի (Մուրձ) վտակին ուղղուում է հիւսիս արեւելը: Ապա աջից իջնում, միանում է այս վտակին Գոմերի առուն, որն իջնում է Գոմերի աւերակներից, ուր ժամանակով ձմերում էին Անահիտին զոհաբերութեան նւիրւած յովտակները, աչառնկըր, խոյերը եւ խոզերը. ուր խնամում, անցնուում եւ պարարտացնում էին այդ մատաղցու-մացուները, որ վարդավառին կուտակած ուխտաւորների պատմելու առաջանակները, աղասիած համար առաջանակները առաջանակները, այս մարդերի մասին անունը Յանէսի գործերին, որ ստիպեալ հնթագրութիւնների տեղից են տալիս:

բ. Թիք-օղաներ մեր պատմագիր վարդապետների գրչից փախած Ոսկիամօր Միլնին զաւակն է, Ոսկեծդյին ու սկեման է, որին մայրը կուտական անարատ յովտեամբ, արեգակի ջերմ սիրով բնդմաւրուել է եւ գարձել է գետերի աշխարհի կենսատուն, եւ կեցուցիչ մայրը գործարանական բոյսերի և կենդանարարների աշխարհի: Անահիտը ջրերով այն է ոսոգել ու կենդանացրել անապատները, որ նրան պաշտել են որպէս Փրկիշ (ΣΩΤΗΡ) եւ կենդանացուցիչ կենսական գոյութեան: (Տես Արաբանգեղոս և Ալիշանի հին հաւատաբը): Օղան բառից պէտք չփոխել: Անահիտը Հելենական Ապոլոնի նման Ուրձուած էր, երկու սեռն էլ ունէր:

գ. Ոսկիրակի, Ոսկիառակի գարձեալ բիւր անունը Ոսկիամօր - երկրից, որի բարձրութեան մէ գտնուում բիւրական սարահարթի ամենամեծ ուխտատեղին - Զիարէթ զէմ զուհուրաթը, ուր հաւաքւում են

Թուրքմանները ամէն տարի ուխտերը կաշատելու եւ շնորհների արժանանալու:

Դ. Գիշաւանը Ուրարտու բարձրաւանց
դակի «ԶԱՎՐԹՆՈՅ» ուխտատեղին է, ուր
երկսեռ երիտասարդները գնում են ըն-
տրելու կենակիցներ հաւաքուած հազա-
րաւոր ուխտաւորների մէջ։ Այստեղ կըտ-
րիմները, քաջերը իրենց ըմբշամարտով,
ձիարշաւով, թռիչքներով չընազների
սիրտն էին զրաւում եւ բաղձանքների շը-
նորհը խնդրում Անահիտից։

և. Գոմերը ծառայել են մատաղացու -
մսացուների ձմեռնային պատապարաննե-
րին:

գ. Միջնաբերդը ծառայել է ուխտաւորաներին օթեվաններին:
հ. Խակ Գիշյին եօթը առւակների կենարոնական զօրութեան վայրն է, ուր աւելի ուշ դարերում, Մակեդոնացոց յետոյ, Հելենասէր Ալբակունի Պարթեևների գերիշխանութեան շրջանում եօթը տաճարներ են հիմնել, եօթն անւան եօթը զօրքի համար: Գիւլլի գեղից դուրս գալուց յետոյ Արաբսը մտնում է կզլ գէրէի (ոսկի) Հովհանքը, ուղղուում է ուղղակի դէպ ի հիւսիս, 25 ըլլումեղրի չափ մինչեւ Իլանի (Վիշապական) գեղը, մի անկիւն կազմելով հոսում է Արեւելահիւսիս մինչ Քեօփրի-քեօյի կամուբջը եւ շարունակում իր ընթացքը դէպ ի արեւելք մինչեւ կասպից ծովը:

8. Թաթար Աելջուցների փոխարէն,
Նայիրի երկրի վրայ եթէ արշաւէին Հելշ
Էնները, Հոռմայեցիները կամ Անգլո-Ասքա
սոնները, մենք այսօր նախապատմական
անուններից ոչ մի յիշատակութիւն չէինք
գտնել եւ չէինք կարողանալ վերստուգել
մեր երկրի քաղաքակրթութեան անցեալը
եւ հասնի որոշ եզրակացութեան: Մահա-
անդ եօթը գար նրանց թաթի տակ ապրե-
ռոց յետոյ, բոլորովին այլանդակւած եւ
կերպարանափոխած կը լինէին բոլոր
յատուկ անուններու:

Արշաւողները եւ տիրողները ոչ միայն զաղաքակրթութեամբ ետ էին, այլ նախապաշարութիւններով կաշկանդւած, նրանք զա-

ւանում էին թէ յատուկ անունները գն-
րագոյնի ներշնչումով են տուուած, մո-

փոխելը մեղք է, յանցանք գերազոյնի դէմ:
Տարաբախտաբար այդ արշաւողները ըն-
դունել էին իսլամի կրօնի հետ, Արաբա-
կան կէտաղրական տառերը, առանց ձայ-
նաւորների, որի պատճառով յատուկ ա-
նունները աղաւաղել են իւ կամ թարգ-
մանել, այնպէս որ ո՞չ շատ դժուարու-
թեամբ կարելի է ուզեցել: «Քարակար-
մունջ» են սուս. «Դասարհանման» են

կարդացել, «Փաղպի» են կազմում «Պաւատլի», «Տիրոկները» — Դիրաբլրար, «Ականա» են առաջ Արքայական կազմում:

«Աղ-թաբ» սև զրուլ Աղաբաբա սև զարդաց
ցել, «Ակ-գեւ» են զրել, «Աղա-ղեւէ» են
կարդում: «Դից-աւանը» Դիւզ-քենդ,
«Դից թագ» են զրել եւ «Դիզ-դազ» են
կարդում եւն, եւն, Եւ կամ «Ոսկեկա-
տարը» թարզմանել են կզլ-թէփէ, «Ոսկե-
սարը»՝ կզլ դազ, «Ոսկելանջը» Ալթուն
գեադուը, «Ոսկեաղբիւրը»՝ կզլ բուլակ,
«Օձուն տաճարը» Ուզուն քիլսէչ, եւն:
Փոխանակ Հռոմի եւ Բիւզանդիայի իշ-
խողների, տրամադրութիւններին ծառայող
պատմիչների գրածները կարդալու,
խօսեցները Աւշատարեան ամրոցների
շինող վարպետներին, աղբիւրների և ջեր-
մուկ շատրւանների, պատւարների շինա-
րաբներին, կոփածոյ եւ սրբատաշ որձա-
քարերին եւ բազալտներին, որոնց իսկա-
կան ճշմարիտ տեղեկութիւնները մեզ կու-
տան:

թիւնից յիսուն-վաթսուն դար առաջ, դագործ դասակարգը եւ լաստերով, տու-
նումմեր Ակաղեան հարստութեան դա- փերով արտահանեցին դէպ ի Միջազետք-
րաշրջանում: ները մեր ցորենը, չամիչը, զինին ու

Պահլաւ-Պարթեևները արեւելքից եթէ
մեզ բերին Արեւի-Միհրի պաշտամունքը
իրենց ուղարի եւ ջորու կարաւաններով,
հիմնեցին անասնապահ ժողովրդի մէջ հան-
քագործ աշխատաւորների դասակարգը,
միենոյն կարաւաններով մետաղները դուր-
սի երկիրները տարան եւ նրանց արտա-
զրութիւնները փոխազրեցին մեր երկիրը.
Ելամից եւ Սանարից գաղթած երկրա-
մշակները մեր երկրում հաստատեցին հո-

ԼՈՐ-ՄԵԾԻ ԵՕԹԸ ԱՐԻԱԿՆԵՐԸ

1. Այսօրւան Սողանլու լեռները Մեծրակեց (նախարար - իշխանների) լեռնաշղթան է, որը թաթարները թարգմանել են Էքրեր դաղ (մեծերի): Թէեւ Մեծրանց լեռները Բիւրականի հոչակը չունին, բայց աղբիւրները, առւակները եւ վտակները այնքան ջրառատ են, որ վիշապազանց-Անահտական պաշտամունքի մեծ կենտրոն են կազմում: Մեծրանց լեռնաշղթայի ջրերը, շատրւանները, ջերմուկները եւ սրանց շուրջը գտնւած նախկին Աչկատարեան շէնքերը, անկոփ, կոփածոյ քարերի որմերը արտայայտիչ են քաղաքա-կրթութեան զարգացման: Գետերի աշխատուական այս լեռնաշղթան ինչպէս առատ ջուր է մատակարարել Արաքսի ամենամեծ վտակ Մօր - Մեծին, այդպէս էլ անխնայ ջուր է բաշխել կուրին եւ էլ անխնայ ջուր է բաշխել կուրին, ձորոխի-պարտոց եւ Փէնէք վտակներին, այնպէս որ երեք մեծ գետերի բնդարձակագոյն ջրամբարն է կազմում Մեծրանց լեռնաշղթան:

2. Տրիբազի դրամների նկարագրութեան մէջ (1911 տ.) Ազգագրական Հանու գէս (թ. ԽԱ) քանի տարի առաջ գրել եմ, որ հայ հոգեւորականութեան կրած վե- ծայր են որձաքարից պատրաստւած քա- ծայր են որձաքարից պատրաստւած քա- սակուսի ճեւով, քանզակներով եւ կան- գնեց Այզու մնձ պողոսայի աջ ու ձախ-

կողմերը, որը գտնուում է կարսում Մեծ
Մօր մէջ գոյացած կղզու վրայ ։ Այս
սահմանանիշները մեր թւագրութիւնից էլ
քանի դար առաջ հաստատւած էին նա-
խարարների ձեռքով, քարային զարգա-
ցած դարաշրջանում, որոնցով համոզել
էին աշխատաւոր բնակչութեան, թէ Մհե-
րական պատգամով Պարթեւ պահլաւները
տէր ու իշխան էին կարգւած այդ երկր-
ներին, որ հովեն ժողովրդին, կթեն,
խուզեն եւ մորթեն ուտեն նրանց մատաղ-
ները։ Պահլաւները ոչ միայն նւաճած հո-
վիաներին եւ սրանց նահապետներին էին
տիրել, այլ սրանց հետ միասին իրենց
սորկացրած հանքափորերն եւս ունէին,
որոնցմով բովերը պեղել, բուրաներ հի-
մնել եւ մետաղներն հալել ու շահագոր-
ծել էին։

3. Ուր պատգամատեղից, Շիպպարից, ելամական տոհմի նահապետական սերըն-
թից իշխան քըմապետներ, ինչպէս երեւ-
ում է, փոխադրւել են ելասի ձերբով
Գետի ափերից եւ եկել հաստատւել են
Տայոց երկրի Սպերի հովտում Բագի ==
(Ջրի աստծուն), Բագգարի, Բազրագի,
Բագինայի, Բագակերտի անունով, որոնք
հիմք էին դրել արօրի եւ գութանի մի-
ջոցով երկրագործութիւնը զարգացնելու,
Չըանցքներ պեղելու, հանդ ու այգի ոռու-

5. Եղեմական Դրախտը ինչպէս համարում էին Բիւրակնեան լեռները, այդպէս էլ կարծում էին թէ զա Մեծրանց անտառումն է եւ այնքան մեծ է եղել զբահամբաւը, այնքան ընդպարձակ առասպեկտները, որ գետերի ակոնքի երկիրը համարել են Անահիտի մշտնական զբախտը: Այս այստեղից եւ այնտեղից բերել են Նախիջևանի երկիրը համեմունք, արմաւ և այլ հեռագործներ: (Տես այս մասին Լումա 1906 տ. թիւ 9/10, Վիշապը կենարուական Ասիայի - Դիպեղի եւ շրջակայքի մէջ: Նոյնպէս Ազգագրական Հանդէսում 1910-1914 տ. 20-24 գիրք):

4. Ψωρίθηγή (βαρόνητή) ήτε ψωνιάνη (θωμητή) μέχρι κανονικώδη Έπειρων γεννηθείσης ή πριν από την έναρξη της συντηρητικής πολιτικής.

բորբոք երկրացիները զով. ու մեղմ կենցաղի փափաքողները: Մանաւանդ որ Անահիտ - Վիշապ աստվածն էր բարձունքից տարածւել, իջել էր Միջագետը իր տարած աւազով, բարերով, կաւերով և այլ փառութիւններ ցամաքեցրել եւ ստեղծագործել կենդանացրել և ընդպարձակել Պարսից ծոցի ափերը լեցնելով: Միջագետը ոչ միայն իր գոյութեամբ, այլ ամբողջ բուսականութեամբ այդ Գերագոյն ջլի տուրքն էր եւ ջրով էին սնւում բոյսերը, կենդանիները եւ այդ ջուրն էր նրանց աստվածը:

Ա. 6. Տատրակ լեռներ են կոչուս
Մեծունու լեռների կենտրոնական մասը,

որոնց կատարում կանգնած է Ոսկետա-
ճարը (Կղլ-Քիլիսէ) իր շատրւան աղբիւ-
րով, աչկատարեան հիմնաքարերով և վերի
շարքերում կոփածոյ եւ սրբատաշ բազալ-
տով։ Այս աղբիւրից առու է գոյանում
ձորակում գտնւած բազմաթիւ աղբիւրնե-
րից եւ Մօր-Մեծ կամ Մարիպամիշ-չայ

անւանում, հոսում է դիպ լ արևելակա-
սիս, անցնում է ներքին եւ վերին Սա-
րիղամիշների մօտով մի մարմանդ տափա-
րակով, որտեղից կարծես առուն չի ու-
զում հեռանալ։ Անշուշտ Ռսկիամօր նեխ-
ըւած մի տաճար է, որի վեղար գմբէթի
մասերը արշակունիների օրով շինւել են ու
թափել եւ յիշեցնում են Վիշապազանց
գարը։ Այս տաճարի միջից բխում եւ

անցնում է առաջանի չորրե և ուղարկած
տեղի է շըջակայ գիւղացիների համար;
ր. Շահանէ առակը ինքը Անահիտն է,
որ իջնում է զպթայակից լեռներից միա-
նում է Դրիկի առակին եւ ապա միա-
ցած ձախից կցւում է Մօր-Մեծին:

զ. Դափկի առուն, իջնում է Դափկի լեռ-

ՄԵԾՐԱՆՑ ԵՐԿՐՈՐԴ ՃԻՒՂԸ

ա. Մեծրանց լեռների ջրամբարները
կզլ-Քիլիսէի հիւսիսային կողմից գալիս
են կակաչա առևակը, որն սկզբում կոշ-
առում է կարգավիկ (կաչաղակի) ջուր, հո-

Եւ Ա. գեղերից անցնելով: Կակաչա ջուրը լանջից, (Քեօռ-Օղլի կալայից) ջրառատ չխար բողազից (Պարսպած ձորից) եւ աղիւրներից եւ կազմում է մի արագընթաց ջուր, որը ջրադացներ է դարձնում: Բացի կաշայի գղեակների - Վանքի, Գիւլի կալայի գղեակների - Վանքի, Գոսի աւերակները նկատելի են մինչեւ այսօր:

գ. Մանուչեհը առւակը հիւսիսից հարաւ իջնելով միանում է ձախից կակաչաջրին, անցնում է պալածորը, ուսողելով Մանուչեհը գեղի հանգերը:

Դ. Խարէլէզի (Ելիսէի) սարից բխում է Սալուտ առակը, որն անցնում է համանուն գեղի հանդերից եւ ոռոգում է: Բնդունում է Լալօղլու ջուրը, հոսում է արեւելահարաւ, անցնում է Գիշի Անահիտի (Վարդի թերթ) աւերակները եւ Խալարչիէի մօտ միանում է աջից կակաչաջրին: Պարզ է, որ քրիստոնէական շրջանում անձարին օգնութեան հասնող Անահիտին փոխարինեցին վարդապետները սուրբ Սարգսով եւ թաթարները թարգմանեցին Խարէլէզ:

Ե. Գիշւի առակեր իջնում է սահիննեղին Զ-Յ քիլոմետր արեւելը հոսելով մըտնում են Խլանլի (Օձական, Օշական վիշտապազանց) աւանը, ուր սրանց միանում է նոյնպէս Մօր-Մեծի երրորդ ճիւղը:

Խլանլիի կոչումը ուղակի Վիշտապատրասի-անւան թարգմանութիւնը, որը նկատելի է աւերակների քանդակաւոր քարերի վրայ: Խլանլիի աւերակները Եղիթիլիսէից բազմաթիւ են, բայց ափսոսոր պեղութեան ուսումնակարութիւններ չեն կատարւած, որպէս զի օրագրութիւններով լուսանկարներով ցոյց տրւի հետարրութեաններին:

ՄՈՐ-ՄԵԾԻ ԵՐՐՈՐԴ ՃԻՒՆԸ

Առաջնորդության մեջ կազմակերպությունը կազմում է գլուխ ի հարաւա արեւելք եւ կազմում է Ակ-բար լեռնաշղթան անտառապատ, որի վրայ է Ակ-բար Զիարէթը (ուխտատեղին) իր Զուրուրաթուղ (Յայտնութիւնով), որը Թափի (Վանդի) նշանաւոր ուխտատեղին է. այս առակը հարաւա-արեւմուտքից հիւսիս-արեւելք հոսելով միանում է Մօր-Մեծին եւ կակաչ առակին եւ երկուսը միասին կազմում են Մեծրանց բարձրութեան Մօր Մեծ վտակը: Այս վտակը կոչում է Զայրը սու (Մարգաստանի առակ), որն իսկապէս դաշտարագեղ միտք է արտայատում:

ա. Զիարէթ սարի տակից անցնում է զվարար առակը, որ կոչում է Ալագեօզ (խաժակն), որը մատնացոյց է անում Անա-

Հիտի խաժակները - լազուր աչքերը եւ
սոկեթել մազերը։ Անշուշտ Նայիրի սեւ
աչեայ, թուխ մազեայ ժողովրդի աստւա-
ծուհին - Վահագնի նման ոսկեթել բո-
ցակէզ մազեր պիտի կրէր, ինչ որ կրում
էին նրա իշխանները եւ քրմապետները։
Ի. Մի առւակ եւս իջնում է միեւնոյն
Զիարէթի սարի հիւսիսից եւ առաջանա-
լով դէպ ի արեւելահիւսիս ձախից միա-
նում է Ալազեօզին, որը յիշեցնում է թէ
Ոսկիամայրը իր դստեր Անահիտից - Ու-
կեհատից անբաժանելի են։ Այս առւակն
էլ կզլ - ըիլիսէ կոչւում, բայց ոչ Մեծ-
րանց հոչակաւոր կզլ - ըիլիսէն է, այլ մի
այլ համանուն ժամատուն։

զ. Փոքրիկ Դիբնիսը - առևակը իջնում
է Ակջակալա բերդից, ոռոգում է դաշտը,

անցնում է վիշտապական կոթողների բե-
կորների մօտից եւ զնում է միանալու
Ալագօզին։ Այս բեկորներով յայտնի է
Դիքնիսը, որոնք հետաքրքրուղների ուշն
են գրաւում։

Դ. Արեւազիք (Դիք-Գիւնից) Լեռներից
իջնում է Արկոսի առակը, որը բխում
է (Եալաղուշ) Եալաղուզ չամից և միա-
նում է Ալագեօզին ձափից:

կ. Կարնակասից Բերնա հասած առև
ւակը, բխում է Արեւադիք լեռների ստո-
րոտից եւ խառնում է ձախից Ալագեօղին։
զ. Ակ-դեւերից դէպ ի արեւատահիւսիս
ուղղում Ոլովիլի առւակը դէպ ի Քարա-

94 ԱՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ

Էին ածում եւ դահուկ դղրդացնում եւ
երբեմն էլ երգում էին:

Ճանապարհին առաջին հանգիստն ա-
ռինք Օձուն գեղում, Մեծ-Մօրից զետից
ոչ հեռու, որի հանդումն է Աջի (Լեղի
ջրի) ջերմուկը: Վրաններն արդէն պար-
զւած էին, կերակուրները պատրաստւած,
ուր լողացան ջերմուկի ջրով տկարները
եւ զիշերեցինք: Հետեւեալ օրը ճանապարհ
ընկանց եւ հասանց Դիքմա-վերինը, Օ-
ձունից տասը քիլոմետր հեռաւորութեան
վրայ, ուր ջերմուկից օգտւեցին եւ զիշե-
րեցինք: Դիքնիսի քըիստոնէական տա-
ճարը ջերմուկին մօտ թէեւ մինչեւ այսօր
կանգուն է, բայց նրա որմերի ներսի եւ
դրսի սրբատաշ ործաքարերը տարել են,
միայն կրաշաղախն է մնացել: Այս բո-
լորակ տաճարի մէջ բիում է ջերմուկը
եւ հոսում դէպ ի աւագան:

Երբորդ օրը իրիկնագէմին մտանց կա-
րա-չայիր, ուր մեր սայլերի առաջ երկու
թուխի զոհեց իսմայիլը եւ իջեվանեցանց
նրանց նահապետական տանը: Թուրք-
մանները սիրահար են զինու, ուստի հօր-
եղբօրս կինը մի հազարնոց (մսխալ) շի-
ռում եւ մի տկնօր զինի թագուն յանձ-
նեց Ամօյի կնոջը, որ տան զլսաւոր տըն-
տեսուհին էր: Երեք օր կարաչայիր մնա-

լուց յետով, նոր լուսնի ծննդեան օրը ճանապարհ ընկանք գէպ ի Ալագեօզ - Ակբարի Զիարէթը 250 սայլով որ 15 քիւրմեղը ճանապարհով հեռու էր եւ երեք ժամից հասանք այն Մարզասաանը, ուր արդէն Մեծ-Մկրտիչն ու Գրիգորը բարձրացրել էին մեր վրանները:

Միեւնոյն օրը մեզ հետ հասան Ալա-
գեօվի մարգաստանը Օլովկլի, Կարս Համ-
զէ, Ալի Սօֆի, Սուփանազատ, Գութթանլի,
Գութթաննոց եւ Քըրկ-Բունարից հազար
սայլոր ուխտաւորներ, որոնց դահուլ
զուռնի ձայնը օդին էր թնդացնում, երգի,
պարողների ձայնը եօթը հազար քայլ հե-
ռու էր տարածում: Թուրքիմաններն շտա-
պել են, որպէս զի վերադարձին խըստ-
հարթին կպչին, իսկ հայերը մի շաբաթ
յետոյ պիտի բարձրանային, քանի որ
Վարդավառը Յունիսի 18ին էր:

Ոնմիջապէս մատաղի թոխլիները (որք
երկրորդ տարւան ոչխար) բարձրացըլին
անտառի բարձունքի Զիարեթը, շէխը զո-
հերը սպանդեց, արխւններով ողողեց զոհի
բարէ մեծ սեղանը եւ բազինը։ Ուխտա-
ւորները իրենց զոհերը շալակած իջան
գաշտ մաշկելու եւ մանրելու, իսկ տն-
տեսուժիները թիթըէնով բորբոքած կրա-
կարաններին զբւած կաթսաների խուփերը
բացին եւ լցին խաշւելու։

Ուխտաւորները իրենց սայլերով մի մեծ
շրջան էին կազմել, աւելի քան հինգ հա-
րիւր մեղք տրամադրով։ Սայլերը հեծ-
ցըրել էին ակերին, լծակները թէք բար-
ձրացրել, կարպետներով եւ թաղփաներով
ծածկել, անձրեւից եւ ցօղից պաշտպան-
ւելու համար։ Սայլերի այս պատւարը
այնքան խիտ էր, որ ոչ ոք զրափ չէր
կարող ներս սողալ, կամ բան փախցնել,
բանի որ արտաքին կողմերին գամփրո-
ներն էին հսկում։ Նւազածուները բաժան-
ւեցին, պոյեմ ասողներին, հեքեաթ պատ-
մողներին շրջապատեցին դեռահասները,
լսեցին առասպելական երգերն ու արկած-
ները մինչեւ կէս զիշեր, ընկան ընեցան
խոփրների եւ թաղփաների վրայ, ծածկը-
ւած կարպետներով եւ գորգերով մինչեւ

արշալոյս: Հետեւեալ լուսաբացին մուռագ խնդրող դեռահասները հասել էին ուժատառեղին, ՅԱՐՈՒԹԵԱՆ ԱՂԲԻՒՐԸ եւ զոհի բազինը շրջապատել: Եօթը քարերով պարսպւած բազինի սալ քարէ սեղանը կարմիր արիւնով ներկւած էր, որը ծորել եւ բազինից գուրս էր հոսել զարդվայր: Բազինից նոյնաէս գուրս էր հոսում ազրիւրի ջուրը, միանում մօտակայակերի ջրերին եւ ոռոգում վարդի թփի պուրակները: Ուխտաւորները վարդերը քաղում կրծքերն էին դնում, բազի քարերը համբուրում եւ մտովի մուրազներ էին աղերսում: Նոյնիսկ հօրեղօրս կինը կաղ ոտքով բարձրացաւ երեք-չորս թիւնումները զառիվերը, որ Տիրամայրը օգնութեան հասնի եւ ծնկի ցաւը կորսւի: Ելեւէջին նւազածուները ածում էին պայաթիներ, գովարանում էին բազմաշնորհ Անահիտին, որ աղերսաւորներին չէր խնայում իր անսահման բարիքները պարզեւել: Ցած գալու պէս ուխտաւորները մօտենում էին տնտեսուհիներին, մածուն, զաթա, պանիր, հալւաստանում եւ նախաճաշելով մտնում էին պարի շրջանները: Պարագլուխը կանանչ մետաքս աղլուխը դրօշակի նման պարզած հովերի հետ ծածանեցնում էր օդի մէջ եւ պարողները երաժշտութեան տակտերով հետեւում էին ամբողջ շարքով նրան: Մէջ ընդմէջ պարողներին տալիս էին զինով թասեր որպէս զի ոգեւորին: Լէսօրից յետոյ մարմնամարզն սկսւեց. ըմբշամարտեցան ախոյեանները, թռան, ցատկեցան եւ քար զցեցին, լտրանոց քարը մինչեւ հարիւր քայլ հեռու քցողները ծափահարւեցան: Աւելի հետաքրքրական էր քսան կոյսի եւ քսան պատանիների զոյգ կացաւները: Երրորդ եւ չորրորդ օրը բազին բարձրացողների շարքերում զեռահասները աւելի ազատ էին նախորդ օրերից: Քարահամըոյընների ժամանակ նրանց աշքերը զննում էին միմեանց. բայց շատ մեծ էր ուխտաւորների թիւը, եւ այնքան սուր էին մրցակիցների աչքերը:

Ապրից իջնելիս մեր սենեկապահն Աւեն
մի չքնաղ եւ հազնւած օրիորդի ձեռքը
բռնած իջեցնուում էր զարիփայր, անվերջ
խօսակցելով եւ հըճւալի դէմքով, Հօրեղ-
բօրս կինը նկատելով ասաց.

— Ալի, այդ ում աղջկին է, ասա,
քեզ նշանեմ, ձեզ մուրազի հասցնեմ, հար-
սանիք էլ կատարեմ, մինչեւ տուն վե-
րադառնալը:

— Այսան, խանում, մեղայ, մեղայ, ոս
սրան արժանի չեմ, մեր շէինի աղջկին է,
շուտով շէինը պիտի գայ ու տանի:

— Աւելի լաւ, չեխի ու սանչպարի
մէջ խարութիւն չկայ, սէրը զերագոյն
մօրից է բխում, ոչ ոք չի յանդգնել մէրն
սպանել։ Բալաջան, աղջիկ, դու սիրում
ես մեր Ավելին։

Շէլսի աղջիկը՝ փիւլունը կարմրմուկ
աչերը խոհարհեց գետին, համաձայնու-
թիւնն արտայայտելով եւ Եթիմ Ամօն,
որ մեծ համարում ունէր թուրքմանների
մէջ, այդ օրը աղջկայ մօրից համաձայ-
նութիւնն ստացաւ:

Վեցերորդ օրն էլ ուրախութիւնները
շարունակեցին եւ զիշերը նսագարանների,
հեղեաթների եւ զիւցազներգութիւնների
ազդեցութեան տակ շարունակեցին ուխ-
տաւորները եւ դեռահասները իրենց հը-
ճւանքը:

Ես այնքան էի յոզնել, որ ըսկել Քսու
էի վրանում, մօրս հսկողութեան տակ:
Սաստիկ վշտացայ առաւտեան, երբ ԱՌ-
սեցի Մկրտիչ ափարի նկարագրութիւնը,
որ կէս զիշելից, երբ լուսնի առաջին քա-
ռորդը մայր էր մտել, չէխը հանզցը ել էր
ճրագները եւ թիւրքմանները կատարել
էին «ԶՐԱՓԻՒԹԸ» (Խաւարումը): Եօթը զեղի
հաստրակութիւնը, աւելի քան երեք-չորս

որիւր տնւոր 1500 հոգի տեղաւորւած յոյլերի շրջափակում, աստղերի ցոլքերի ակ, մի հեթանոսական սովորոյթ էր ստարում։ Այսոն ինչպէս որ զննել ու եսել էր պատմեց, Գրիգորն ու Քեալ-եփանը ցաւում էին, որ այդ խաւարուային զիշերի մասին գաղափար չունէին և չեին տեսել։

Այդ, մի տեսարան էր նման անոր որ
եսնուում է «Գատառըց» զրբի մէջ՝
ելով ուխտի գնացով կոյսերին որոնք
ուեւանգւում են Բենիամինեան տղամար-
երից:

Հերոգոտից, Սարաբոնից երկու հազար
արթի յետոյ եւս Անահտական երեկո-
երի սովորոյթները շարունակում են գե-
ռերի հովիտներում եւ նախապաշարւած
ողողուրդը չի սթափում իր քնից:

Արդեօք այս «Զրափիւֆը» այն սովորոյթը չէ, ինչ որ կատարւում էր Անահատական տաճարներում, ինչ որ պատմում են ականատես յոյն պատմիչները, կամ այն որ կատարւում էր Ե-Ը դարերում